№ 170 Սեպտեմբերի 16 Հինգշաբթի 1882 Սեպտեմբերի 16 Հինգշաբթի № 170

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Թիւրքիայից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Դադարեցրած «Гусли» ռուսաց շաբաթագրի խմբագիր-հրատարակիչ Ի. Ֆ. Տիսօրժէվսկի, կրկին դիմեց իր նախկին պարապմունքին, փաստաբանութեանը, որով նա իր շաբաթաթերթը հրատարակելուց առաջ, պարապել է 12 տարի շարունակ։ Սեպտեմբերի 10-ին Թիֆլիսի դատաստանական պալատում պ. Տիսօրժեվսկի պաշտպանում էր հետաքրքիր գործը։ Երեսուն հոգի ռուս սկօպեցներից (աղանդաւորներ) դատապարտված էին Եկատերինօդարի նահանգական դատարանի վճռով հետևեալ պատիժների. երկուսը Լարիոնով և Ֆերոնով 8 տարվայ տաժանակիր աշխատութիւնների, մին Շչօգոլով 4 տարվայ տաժանակիր աշխատութիւնների, իսկ մնացած 27 հոգի աքսորանքին Արևելեան Սիբիր։ Բոլորն էլ մեղադրված էին բռնի կերպով մարդկանց իրանց աղանդին դարձնելու մէջ։ Ցայտնի է որ այդ աղանդին դարձողները ենթարկվում են մի յայտնի ֆիզիկական այլանդակութեանը։ Բայց դատաստանական պալատը ընդունեց մեղադրվածներից երկուսի ապէլացիական դանդատը, այն է Լարիոնովի և Ֆերոնովի և արդարացրեց նրանց։ Սրանց երկուսին պաշտպանում էր պ. Տիսօրժեվսկի։ Իսկ մնացած 28 հոգու մասին Եկատերինոդարի նահանգական դատարանի վճիռը վաւերացրեց Թիֆլիսի դատաստանական պալատը։

—

Մեզ ուղարկել են հետևեալ նկատողութիւնը տպագրելու համար։ «Երբ ուսուցչական ժողովի վերջին նիստին պ. նախագահը յայտնեց որ հայոց երկրորդ ընդհանուր ուսուցչական ժողով կայանալու է չորս տարուց յետոյ, մի և նոյն ժամանակ քուէարկվելու համար հարց առաջարկվեցաւ թէ որ քաղաքում պէտք է կայանայ ժողովը։ Մի քանիսներ առաջարկեցին Երևան, միւսները Ալէքսանդրապօլ, երրորդները Վաղարշապատ, բայց մեծամասնութիւնը մատնացոյց արաւ Թիֆլիսի վրա։ Եւ իրաւ, Անդրկովկասի ոչ մի քաղաք այդ տեսակ ժողովի համար Թիֆլիսի պէս յարմարութիւններ չունի և ահա ինչ պատճառներով. 1) Մենք ուզում ենք մեր հասարակութեան մեծամասնութիւնը ծանօթացնել մեր դպրոցական գործի առաջադիմութեան հետ, բայց միթէ մի Վաղարշապատում կամ Ալէքսանդրապօլում ընդհանուր ուսուցչական ժողովը այդ նպատակին հասնելու համար նոյն դիրքը կունենայ, ինչ որ կարող է ունենալ և ունեցաւ Թիֆլիսում. 2) Ցայտնի է որ մինչև 50 ուսուցիչներ բնակարան և ճաշ ստացան Թիֆլիսի ընտանիքներում ժողովի տեղութեան ժամանակ, և ոչ մի ուրիշ քաղաքում այդ գործը չէր աջողվի. 3) Թիֆլիս կապված լինելով երկաթուղով Փոթի և Բագու քաղաքների հետ, անհամեմատ դիւրացնում է շատ տեղերի հետ հաղորդակցութիւնը. 4) Ուսուցիչները Թիֆլիսում տեսան և վայելեցին այն, ինչ որ մեր երկրի ոչ մի այլ քաղաքում չէին կարող տեսնել և վայելել. նրանք այցելեցին թանգարան, կօնցերտներ և ներկայացումներ, օպէրա, նրանց հիւրասիրեցին, ճաշ տուեցին. 5) Ոչ մի այլ քաղաք Անդրկովկասի մէջ չէր կարող ժողովին նիւթական այն արդիւնքը տալ, ինչ որ տուեց Թիֆլիսը. հասարակութեան միջից բազմաթիւ այցելուներ երկու երկու ռուբլ վճարելով, հայթայթեցին ժողովի ծախսերի մի մասը. 6) Ոչ մի այլ քաղաքում չը կայ այն բազմաթիւ ինտելիգենցիա, ինչ որ կայ Թիֆլիսում. բժիշկներ, խմբագիրներ, մանկավարժներ և այլ մասնագէտներ կարդացին ռէֆերատներ, ներկայացրին իրանց մտքերը տեսական կերպով, դիւրացնելով այսպիսով գործնական հարցերից շատերի վճիռը, միջոց տալով դաստիարակական ուսուցիչներին մի բան սովորելու. այդ բոլոր մարդիկ, նոյնպէս և մեր կանայքն ու օրիորդները, որոնք Թիֆլիսի ինտելիգենցիային են պատկանում, չեն գնայ ուրիշ քաղաք, չեն մասնակցի ուսուցչական ժողովին, եթէ նա կը կայանայ մի այլ քաղաքում. համարձակ կարելի է ասել, օրինակ, որ մի այլ քաղաքում մի հատ վարժուհի չի լինի ժողովում, ուր մնաց այցելուկանայք և օրիորդներ։ 7) Վերջապէս ուրիշ քաղաքում ժողովի տեղութեան ժամանակ չի լինի այն, որ նոյնքան սանձահարում է ժողովը, նախագահին, կարգադրիչներին, որքան նախագահի զանգակը սանձահարում է ժողովականներին. մենք խօսում ենք ամենօրեայ թերթի մասին, որ անդադար հսկում է, կարդի է հրաւիրում ժողովի բոլոր մասնակցողներին, անխնայ քննադատում է նրանց բոլոր արածները. ուղղութիւն է տալիս հասարակական կարծիքին, ամեն օր կարողանում է օգտաւէտ առաջարկութիւններ անել։ Այդպէս ժողովի նիստի մէջ մամուլի ներկայացուցիչների երևալը կարգ ու կանոն է դցում ժողովում, զսպում է կամայականութիւնը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վան, 8/20 օգոստոսի 1882.

Կարևոր դէպքեր կը պատահին, կամ ճիշդ բառով կարևոր մեքենայութիւններ կը պատրաստուին այստեղ։ Ալէքսանդրիոյ քրիստոնէից ջարդը պէտք էր որ մեծ արձագանք գտնէր իսլամական աշխարհին մէջը, կրօնական մոլեռանդութիւնը պէտք էր որ վերին աստիճանի բորբոքուէր և ահա այդ եղած է այս տեղ։

Թիւրքերը այժմ կը նկատեն որ Սերպիոյ կոտորածի (1860) հեղինակք անպատիժ մնացին, կը նկատեն որ Բոլգարիոյ մեծ կոտորածը տեղի ունեցաւ Թիւրք կառավարութեան հրամանաւ, կը նկատեն որ սուլթանը ոչ միայն չը պատժեց Ալէքսանդրիոյ կոտորածի հեղինակները, այլ պատուանշաններով վարձատրեց նաև նոյն ջարդի դիւցազն Արաբի փաշային և այն մարդոց՝ որք աղէկ աշխատեցան քրիստոնեաները ջարդելու ժամանակը և այժմ սուլթանի հզօր աջակցութիւնը կը վայելեն ընդդէմ Անգլիացւոց՝ որք իրենց ազգակցաց վրէժը լուծելու եկած են. կը մտածեն որ երբ եւրոպական հզօր պետութեանց հպատակները, այնպիսի երկրի մը մէջը՝ որ շատ մօտ է Եւրոպիոյ, ուր պետութիւնները միջամտելու շատ դիւրութիւն ունին, կը կոտորուին և սուլթանը ոչ միայն չը պատժեր այլ կը վարձատրէ իսկ կոտորողները, և կը հասնեն այն եզրակացութեան որ՝ եթէ իրենք ևս այս տեղը, ուր քրիստոնեայ պետութիւնները շատ մօտ չեն և միջամտելու համար ոչ դիւրութիւն և ոչ շահ ունեն՝ այդպիսի կոտորած մը սկսեն որք և անպաշտպան հայի վրայ, ոչ միայն իրենց խալիֆայի բաղձանաց համաձայն վարուած պիտի լինին,

—

Անշուշտ չէք հնթադրեր որ այս խնդիրը առաջին անգամն է կը ներկայանայ ազգին ուշադրութեանը։ Ուրիշ ատեններ խօսուած է, և թէ յիշողութիւնս տեղն է մի քանի տարի առաջ դրուեցաւ բաւական այս կէտի վրայ «Մշակի» թղթակցութեանց մէջն ալ։ Սահմանադրութեան հիմնադիրները ազատ չէին դրել ամեն յօդուած իրենց ուզած կերպովը։ Կառավարութիւնը պիտի վաւերացներ։ Նաև Հայաստանի այն ատենի դարգացման վիճակին նայելով աւելի օգտակար էր տալ Պօլսոյ բազմաթիւ երեսփոխաններ։ Այսօր իսկ չեն վերցուած այդ պատճառները։ Ազատ հնք ընել սահմանադրութեան մէջ ուզած փոփոխութիւններնիս։— Բայց ասենցմէ զիտենք նաև թէ՝ երեսփոխանաց մեծամասնութիւնը տալով Հայաստանի և գաւառաց չը կայ ո և է օգուտ գործնականին մէջ։ Հայաստան և Ցաճկաստանի գաւառները կընտրեն 40 երեսփոխան, արդ ինչ են մինչև հիմայ եղած ընտրութիւնները։ Ասենց ընտրածները սառուար մեծամասնութեամբ պօլսեցի են։ Եւ ամենէն մեծ դժբաղդութիւնը հոն է որ, իրենց ընտրած պօլսեցի երեսփոխանները չատ անդամ այն անձերն են որք Պօլսէն չէին կրնար ընտրուիլ, մօտէն ճանչցուած են։— Եթէ ընդունուի պ. Զերազի առաջարկը, չունենար ո և է արդիւնք գործնականի մէջ, միայն տեսական զոհացում կուտայ։ Բայց ընդունուիլն ալ հաւանական չէ։ Եթէ ընդունուի հետևութիւնը կըլլայ երեսփոխանական ժողովոյ լուծումը և նոր ընտրութիւններ. և այս առաջարկն ալ եղած է այս նպատակաւ։ Բայց մեր պատուարժանք տրամադիր չեն տեղերնին դառնալու։ Պ. Զերազի առաջարկը կը խրկուի նախաքննութեան դիւանին, այսինքն ի գուն կորստեան։

Ուր ուրեմն կը հասնի ժամը վարչական խնդրով զբաղելու։ Պատրաստուինք նորութեանց, նոր զարմացմանց։ Խնդրոյն բացումը կը կատարուի պ. Յակոբ Արշակի գրաւոր մէկ առաջարկ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱՆԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 6 սեպտեմբերի

Ազգ. ժողովը գումարեցաւ սեպտեմ. 2, երեքշաբթի առաւու, Գումքապու մայր եկեղեցին։ Ժողովարանի դռները փակ են ամբոխակ։ Ատեանը կը բացուի ժամը 10-ին։ Ներկայ են 57 անդամք. մեր խորհրդարանական լեզուով պէտք էր ըսել «ներկայից պատկառելի թիւ մը»։ Կաթենագետէ բժիշկ պ. Թիրեաքեան, կը նախագահէ Սիմոն եպիսկոպոս։ Ամեն ոք գիտէր թէ՝ այդ նիստը պէտք էր ըլլար մին կարևոր գումարումներէն Ազգ. ժողովոյ։ Այն օրը ժողովը պիտի ընտրէր նոր վարչութիւն մը, այսինքն «Թիւրքիոյ հայոց կենտրոնական կառավարութիւնը»։ Այդ կառավարութիւնը ամեն ժամանակէ աւելի այս միջոցիս ունի մեծ նշանակութիւն մը։ Անիշխանութիւնը կատարեալ է. փորձանաւոր օրերու մէջ ենք։ Այս նիստն ալ եղաւ մին անոնցմէ որ ազդած են ազգին մեծ տխրութիւն։

Երբ Ատեանը կը բացուի բնական էր ենթադրել թէ ժողովը երկրորդական նկատելով ուրիշ հարցեր, կը զբաղի միայն վարչութիւն ընտրելու խնդրով։ Ամենէն։— Նախ Մայր-Դիւանն է որ կառաջարկէ վաւերացնել նոյն օրը տասերեք նիստերու ատենագրութիւնները։ Երևակայեցէք. 81 մայիս 7-էն ի վեր եղած ժողովոյ ատենագրութիւնները դեռ վաւերացում չեն ստացած։ Այս միջոցիս որքան փոփոխութիւններ. նոր անձեր ընտրուած, ուրիշներ պակսած, այնքան բաներ անցան, դիւանը նոր, որու միտքը մնացած է թէ ինչ ըսեր է անցեալ տարի, կամ ինչ որոշում տրուած է։ Ատենագրութիւնները տպագրեալ են։ —Պարզ էր որ այս վաւերացման գործին համար մի ամբողջ նիստ յատկանար, նոյն օրը միթէ ժամանակն էր։—Ինչ և է քիչ մը վիճաբանութիւնէ վերջ կը ձգեն այս խնդիրը ուրիշ աւուր։

Ասկէ վերջը կուգան մի քանի երեսփոխանաց հրաժարականները որք՝ կընդունուին։ Այնուհետև ալ կարգը նոր ընտրուողներուն է, որք պէտք է վաւերացուին։ Նոր երեսփոխան ընտրուած է պ. Պողոս Շիշմանեան (եղբայր պ. Ծերենցի)։ Այս ընտրութիւնը կրնանք նկատել զոհացուցիչ։ Նոր ընտրեալը կը պատկանի այն խումբին որք թէպէտ պերճախօս չեն, բայց ունեն ուղիղ դատողութիւն։ Կուտան քուէներին առանց անձնական մտածմանց։ Եւ վասն զի պ. Շիշմանեան ունէր այս յատկութիւնները, ուրեմն բնական էր որ մաքառէին իր ընտրութեանը դէմ։ Ահա վիճաբանութեան դուռ մը։ Այս ընտրութիւնը օրինաւոր է, ըսելիք չը կայ, սակայն ընտրողք բազմաթիւ չեն եղած։— Բայց միթէ մինչև այսօր ընտրողները ընտրուած են հարիւրաւոր քուէներով։ —Ենթադրենք թէ գնեն նոր օրէնք մ՚ալ, նոր օրէնք մը ունի ո և է ազդեցութիւն անցեալ գործողութեանց վրայ, որ այսօր եկեր այդ խնդրով զբաղիլ կուգան։ Ասենցմէ զատ, թէ մի թաղի բնակչաց մեծ մասը անտարբեր է ազգային գործոց, կրնայ ըսուիլ փոքրամասնութեան որ ինքն ալ անտարբեր մնայ։ Եթէ փոքրամասնութիւնը գէշ ալ ընէ, անիրաւ բան չէ ըրած, որովհետև գէշ աղէկ նոյն բանն է մեծամասնութեան համար։— Այս աւուր համար անպէտ այս խնդիրն ալ քիչ մը ժամանակ կը դրաւէ, ընտրութիւնը կը վաւերացուի։ Կը մնայ ուրիշ ատենի վիճաբանել խնդրոյն բնութեանը վրայ։

Պ. Շիշմանեանի ընտրութիւնէ վերջ կուգայ ուրիշ ընտրութեան մը վաւերացումը։ Կը պատմեն թէ ատենապետը բաւական վարանման մէջ է եղեր թէ ինչպէս հաղորդէ այդ ընտրութիւնը։ —Պօլսոյ փոքր թաղերէն մին ընտրեր է երեսփոխան երևակայեցէք ով։ Գրասէր Ատոմ։ Այո, նոյն ինքն պ. Գրասէր Ատոմը, նա որ ինքզինքին համար կըսէ «ես լոյս եկի յաչխարհ» հայոց երեսփոխան ընտրուեր է և ընդուներ ալ է։ Երբ պ. Ատոմ Միացեալ ընկերութեանց երեսփոխան ընտրուած էր, հրաժարական կուտար գրելով «ես երազի մարդ եմ, ինչ բան ունիմ անոնց մէջ որք գործ պիտի տեսնեն։» Այսօր պ. Ատոմ ընդունելով երեսփոխանութիւնը կը յայտարարէ նովին գործովն թէ՝ հայոց երեսփոխանք երազատեսներ են, ըստ իրեն, և թէ իր արժանաւոր տեղը անոնց մէջն է։ Գէշ պատիւ չըներ ժողովին։

Հասաւ վարչական խնդրոյն ժամը. ոչ դեռ։ Ահա պ. Սուրէնեան բեմ է ցատկեր և չանթաձիգ լեզուով կը գոչէ թէ՝ ժողովը պարտաւոր է զբաղիլ նոյն օրը ազգային ներքին գործերով. իրը զի այն օրը ժողովը գումարած ըլլար խորհելու համար Արապի բաշայի գործոց վրայ։ Քիչ մը ժամանակ ալ պ. Սուրէնեան կը սպառէ, անոր առաջարկն ալ ուրիշ աւուր կը մնայ։

Ամեն ոք կըսէ ալ եկաւ վարչական խնդրով զբաղելու ժամը։ Պատիր յոյս։ Պէտք է ամենայն ինչ կատարեալ ըլլայ։ Սահմանադրութեան փոփոխութիւններ ալ հարկ է որ առաջարկուին։ Բան տարիներու հաշիւ մաքրելու օրն է։ Պ. Զերազ կուզայ խմացնել ազգին թէ՝ սահմանադրութիւնը ունի հարստահարական տրամադրութիւններ։ Ահա պ. Զերազի սրտաշարժ առաջարկը։

«Նկատելով որ Կ. Պոլսի մի քանի հազար հայերն Ազգային Ժողովին մէջ ունեն 100 ներկայացուցիչներ, մինչ Ցաճկաստանի միլիոնաւոր հայերն իրաւունք ունեն ընտրել լոկ 40 երեսփոխաններ։

«Նկատելով որ այս բաշխում չէ բանաւոր, կը վիրաւորէ մեր գաւառացի եղբայրներ և մի տեսակ հարստահարութիւն է անոնց դէմ։

«Կառաջարկեմ որ Ազգային սահմանադրութեան 9-րդ յօդուածն բարեփոխուի, և այսուհետև կենտրոնական երեսփոխաններն լինին 40 և գաւառականներն 100։»—

այլ նաև աղէկ վարձատրութիւն պիտի ստանան թիւրք կառավարութիւնէն՝ որ հայկական խնդիրը լուծել կը փափագի Հայաստանը հայերէ զատարկելով: Այս միջոցը դէշ չէ: Վերջին պատերազմի ժամանակը քիւրդեր թանգ ծառայութիւն մը մատուցին սուլթանին Բայազէդը և Ալաշկերտը հայերէ պարպելով, իսկ այժմ երբ թիւրք նախարարները վստահ են որ հայկական խնդիրը նորէն երևան պիտի եկնէ զիրենք ձանձրացնելու համար, կը մտածեն որ զայն այժմէն իսկ լուծելու միակ ապահով միջոցը հայերը նիւթական վատ դրութեան ենթարկել կամ զանոնց ծանր տրոց ներքև ճզմելը բաւական չէ. նոցա վաճառականները հրդեհել տալ և արուեստական սովեր ստեղծելը բաւական չէ, այլ պէտք է տակաւ պարպել զանոնք այն տեղերէն՝ ուր աւելի և մեծ բազմութեամբ կը բնակին նոքա:

Թէ թիւրք կառավարութիւնը և թիւրք ժողովուրդը այսպէս կը մտածեն և այսպէս կը նկատեն պօլսական վատ երևակայութեան արդիւնք չէ. արևելեան հարցը առաջին անգամ ծագելէն ի վեր այս է թիւրք կառավարութեան աւանդական քաղաքականութիւնը, այս է թիւրք ժողովրդեան աւանդական մտածութիւնը. Մորայի ապստամբութենէն վերջը տեղի ունեցած ամեն դէպքերը ապահովապէս կառաջնորդեն զմեզ այս եզրակացութեան: Շատ հեռուն երթալու պէտք չը կայ, օրինակները մեր շուրջը փնտռելու համ: Յիշենք արդ օրինակներէն մինը:

Որպէս թէ հայ գիւղացիք բաւական ճզմուած չը լինէին տրոց ծանրութեան ներքև, անցեալ տարի կալուածական նոր օրէնք մը հրատարակուեցաւ՝ զոր «Թէչքելաթ» անուանեցին. այդ օրինաց գործադրութեամբ ամեն գիւղացու կալուածական տուրքը կրկնապատկուեցաւ և եռապատկուեցաւ: Հայ գիւղացիք՝ որք արդէն կը դժուարանային իրենց տուրքերը վճարել՝ երբ թեթև էր՝ անբաւականութիւն յայտնեցին նոր օրինաց գործադրութեան համար, քանի մը գաւառաց բնակիչք՝ որպէս Գաւաշիք զաղթելու պատրաստուեցան, բայց կառավարութիւնը ամենափոքր կարեկցութիւն չունեցաւ խեղճ հայ գիւղացւոց դժբաղդ դրութեան վրայ և թող տուաւ իրեն անտարբեր հանդիսատես լինել նոցա զաղթականութեան՝ որոյ առաջքը առնուեցաւ թէև ուրիշ միջոցներով բայց մեծ դժուարութեամբ: Իսկ երբ ամիս ու կէս առաջ Ալաշկերտի մեծ դաշտին մէջը բնակեալ հայդէրանցւոց աշիրէթի իբր 400 տուն քիւրդ բնակիչք նորէն կալուածական տրոց պատճառաւ զաղթեցին ի Պարսկաստան, նոյն ինքն գաւառի գայմագամն 50 այրուձիով աշիրէթի պետ Մուսա աղայի ոտքը գնաց և ընդունելով նորա պայմանները Օսմ. հողը հրաւիրեց զայն իր աշիրէթի հետ: Այսպէս է թիւրք կառավարութեան հռչակած հաւասարութիւնը: Բայց եթէ այսպիսի մանր դէպքերը թուենք՝ հատորներու պէտք կունենանք:

Այժմ ստուգուած է որ այստեղ ալ կարեւոր խորհուրդներ տեղի ունեցած են Աղէքսանդրիոյ նման քրիստոնեայները կոտորելու, կամ 1876-ի նման վաճառականոցները վերստին հրդեհելու համար: Այս խորհրդոց գոյութիւնը ստուգուած է ոչ միայն այն պատճառաւ որ այստեղ ամենայնչին թիւրք մը՝ որոյ երեսը թքնելու անգամ կափսոսայ մարդ՝ քրիստոնէի և մահմետականի մէջ վէճ մը ծագած ժամանակ «ինչ, կուզէք որ այստեղ ալ Շամի պէս ընենք» (Սիրիոյ կոտորած) կը պոռայ. ոչ միայն այնու որ կը հաւատան թէ կառավարութիւնը հրաղէններ բաժնած է թիւրքաց տուները. թողունք ասոնք, թիւրքերէն քանիները մինչև անգամ իրենց հայ բարեկամաց ոմանց յայտնած են իրենց խորհուրդը, իսկ այդ պատուական հայերը՝ փոխանակ իրենց ազգակցաց հետ միանալով վտանգի առաջքը առնել խորհելու, առ ահի քանի մ՚օր իրենց տուներէն անգամ դուրս չելան. իսկ հայ վաճառականները բաւական համարեցին իրենց վտճառքներէն մաս մը խանութէն ուրիշ տեղ փոխադրել առանց իրենց խանութները հատ մը հրաղէն դնել խորհելու: Եւ արդարև բնաւ դժուարութիւն մը չը կայ թիւրքաց առջև իրենց մտադրութիւնը ի գործ դնելու համար. առանց ափ մը արիւն թափելու նոքա պիտի կարողանան գրեթէ օրուան մը մէջ կոտորել այն ամեն հայերը զորս կարելի է ձեռք բերել չուկայի կամ այգեստանի մէջը. ոչ մի խանութի մէջը զէնք չը գտնուիր. և եթէ այդպիսի կոտորած մը տեղի ունենայ պիտի կոտորուին հայերը առանց թշնամւոյն մի անդամը գոնէ սպանել կարողանալու, իսկ վաճառանոցները վերստին հրդեհելու համար երբէք դժուարութիւն չը կայ որպէս օրինակը տեսնուած է արդէն 1876-ին:

Երբ այդչափ դիւրութիւններ կան, էր ապա կը յապաղեն թիւրքերը իրենց մտադրութիւնը իրագործելու, կը հարցունէք թերևս: Ինչ, միթէ այդչափ յիմար կը կարծէք թիւրքաց կառավարութիւնը: Որպէս գիւղերը մանուկի քունը կը խռովէ այն առարկայի պատկերը՝ յորմէ մանուկը մի անգամ սարսափած է, նոյնպէս ռուսական յիշատակը կը խռովէ չարունակ թիւրք նախարարները որ քունը, ռուսական ստուեր մ՚անգամ բաւական է սարսափահար ընելու թիւրքերը: Արդ այնպիսի փափուկ ժամանակ մը երբ պարսկական գօրքերը սահմանագլխի վրայ բանակած են, երբ թիւրքերը ռուսական մատ կերևակայեն պարսկական շարժմանց մէջը, բնական է որ թիւրք կառավարութիւնը զգուշանայ այնպիսի գործերէ՝ որք ռուսական միջամտութիւնը հրաւիրելու բնութիւնն ունեն: Բայց որչափ վախկոտ են թիւրքերը, նոյնչափ խորամանկ են. թիւրք կառավարութիւնը այնպիսի միջոցներ գիտէ իր մտադրութիւնը իրագործելու համար, որով թէ իր նպատակին հասած լինի և թէ պատասխանատուութիւնը ուղղակի իր վրայ չը ծանրացնէ:

Իբր 10—12 օր առաջ յանդէպս մեծ մարդ մը ձեզ հիւր ունեցած էք, մարդ մը, ախ ոչ, սխալեցայ սուրբ մը՝ որ երկու տարիէ ի վեր հիւր էր սուլթանի մօտ, որ ձեզ հիւր ըլլալէ յետոյ տեսակցած է հայոց Վեհ. Հայրապետի հետ՝ որպէս կը հաւատան թիւրքերը: Այս մեծ սուրբն ահա վերջապէս «ի լրումն ամենայն օրինաց և մարգարէից» այս շաբթու իր սուրբ ոտքը մեր հողին վրայ դրաւ նորէն՝ յորմէ երկու տարիէ ի վեր զըրկուած էինք: Ո՞վ է արդեօք այս մեծ այցելուն՝ որոյ համբաւը դժբաղդաբար այն ժամանակը միայն առ ձեզ կը հասնի, երբ նա արդէն ձեզմէ հեռացած է. այն մարդը, որ ձեր քաղաքէն աչքերը գոցելով անցած է չը տեսնելու համար անհաւատից ամբարշտութիւնները, Բայազէդի արիւնհեղութեան մեծ դիւցազն, պարսկական հողի վրայ քրդական վերջին արշաւանաց հռչակաւոր գլուխն՝ նորին մեծութիւն Շեյխ-Ութէդուլլահ: Սա Կ. Պօլսէն մեկնած է հայու մը առաջնորդութեամբ և ծպտեալ ձեր գաւառներէն անցնելով նախորդ շաբթուն օսմ. հողը մտաւ և ինքզինք յայտնելով՝ բայրամը մակուացոց աշիրէթի պետ Թեմուր աղայի մօտ կատարելէ յետոյ առանց Վան հանդիպելու արագաբար մեկնեցաւ իր տունը՝ ի Ցէքարի: Այն ամեն գիւղերը՝ յորս նա կը հանդիպէր ճամբու վրայ՝ անմիջապէս 5—10 ձիաւոր կը հասնէին Շեյխին ընկերանալու համար, այնպէս որ երբ նա Թեմուր աղայէն կը բաժնուէր իւր տունը երթալու համար, Շեյխի հետ կային արդէն 1,200—2,000 ձիաւոր քիւրդեր:

Դարձեալ հայ մը. արդեօք Թիւրքիոյ մայրաքաղաքին մէջը շեյխին առաջնորդելու համար հայէ զատ ուրիշ մարդ չը կրցան գտնել: Երբ պատրիարքարանի վարչութեան անդամ, իսկ տնտեսական խորհրդական մը (Գարեգին Մէլիքեան) ազգային գործոց մէջը Սայիդ փաշայի լրտեսը կը լինի, հայ մը շեյխի մը առաջնորդած է եղեր համեմատաբար շատ թեթև գործ է...:

Այս պահուս երբ դրացի սահմանագլխոց վրայ շարժումներ կան, երբ պարսկական մօտալուտ պատերազմի մը հաւանականութիւնները հետզհետէ հաստատութիւն կը գտնեն, մեծ կարևորութիւն պարտի ունենալ շեյխի յանկարծակի և տարբեր ճամբաներով ծպտեալ վերադարձը, մանաւանդ որ Կ. Պօլսոյ լրագիրները ցարդ լռութիւն կը պահեն այս իրողութեան վրայ: Բայց էր շեյխը անուղղակի ճամբաներով վերադարձաւ օտար տէրութեան մը երկրէն անցնելով ծպտեալ. ասոր պատճառը կրկին է ըստ իս: Նախ՝ եթէ շեյխը վերադառնար ուղղակի ճամբաներով չէր կրնար ծրպտել, որով շեյխի վերադարձի լուրը՝ զոր կարելի եղածին չափ գաղտնի պահել կուզեն՝ անմիջապէս պիտի տարածուէր. երկրորդ՝ Շեյխին չուտով իր տունը հասնելու հարկ կար և առ այս յարմար է ձեր ճամբան՝ ուր երկաթուղիներ և դիւրագնաց ուղիներ կան, այնպէս որ շեյխը 10 օրուան մէջը կարող եղած է Վանայ սահմանները հասնել, մինչդեռ ուղղակի ճամբով գալու համար 30—40 օր պէտք էր թէ ճամբու անկանոնութեան և թէ իւրաքանչիւր քաղաքը 4—5 օր մընալու ստիպեալ լինելուն համար: Ինչ բան արդեօք կը ստիպէ Շեյխը այսպէս չուտով վերադառնալ իր տունը, էր գաղտնի պահել կուզուի նորա վերադարձը, այստեղ է ահա բուն գաղտնիքը: Տիրող կարծիքն այս է որ Շեյխը կը խրկուի գլխաւոր պատուար մը լինելու համար պարսկական հաւանական յարձակմանց դէմ այնպիսի ժամանակ մը երբ օսմ. բանակը գլխաւոր և առաւել կարեւոր զբաղումը ունի պետութեան մի ուրիշ կողմը՝ յեգիպտոս: Հանելուկը լուծուեցաւ: Բայց պարսկական սահմանագլխոց կողմն ալ իրաց վիճակը բաւական ծանրացած կը թուի. տեղս գրտնուած բոլոր զօրքերը այսօր դէպի այն կողմ մեկնեցան քաղաքը 40—50 թնթանօղաձիգ զօրաց յանձնելով. չէրքեզ Մուսա փաշան՝ երկու օր առաջ թղթաբերի հետ մեկնած է Կարինէն և վաղը տեղս կը հասնի. նոյնպէս այստեղ պիտի գայ կըսեն Միւշիր Նէզիֆ փաշան՝ չորրորդ զօրաբանակի հրամանատարը յէրզնկա: Այս ամեն պատրաստութիւնները ցոյց կը տան որ իրաց վիճակը տագնապալից է և տիրող հաւանականութիւնն այս է որ օսմ. և պարսկական զօրաց միջև ընդհարում մը անհրաժեշտ է:

Երբ կը յիշեմք պարսկական անգթութիւնները՝

կով: Պ. Յակոբ Արշակ թարգման կը հանդիսանար խումբ մը երեսփոխանաց որք նախորդ օրը մասնական ժողով մը ըրած էին: Ահա այդ կարևոր առաջարկին ամփոփումը:

1) Պահել արդի վիճակին մէջ պատրիարքական խնդիրը մինչև որ պատասխան գայ Դրնէն:

2) Ընտրել առժամանակեայ վարչութիւն մը, որուն պաշտօնը տարի մը տևէ: Վարչութեան նախագահէ կրօնական գործոց խորհրդականը: Գործակցի պատրիարքական փոխանորդը: Պաշտօնի բաժանումները ըլլան արդի դրութեամբ:

3) Հետևեալը ըլլայ նոր վարչութեան գործելու ծրագիրը:

Ա. Կարգադրել ազգին ներքին օրական գործերը:

Բ. Հոգ տանել մեր ներքին բարեկարգութեանց:

Գ. Հաւասարակշռել ազգային ելևմուտքը, այսինքն ծախսել հասոյթէն % 75: Իսկ մնացած 25-էն հինգը պահեստի դնել և 20 յատկացնել հին պարտուց վճարման:

Դ. Աշխատել որ գտնեն նոր աղբիւրներ հասոյթի: Ծախքերն ընդլայնել ըստ պիտոյից, դրամը գանձելէ վերջ: Պարաք չընել:

Ե. Ծանուցանել Ազգ. ժողովոյ պատրիարքական խնդրոյն համար Դրնէն գալիք պատասխանը:

Զ. Մինչև երեք ամիս բերել ժողովին ծրագիր մը այն ընթացքին վրայ որոյ պէտք է հետևել ապագային մէջ ազգային գործոց համար:

4-դ. Նոր վարչութիւնը կազմելու համար կը ներկայացնեն վեց ընտրելիներ:—

Պ. Յ. Արշակ և ընկերաց այս ծրագիր—առաջարկը եթէ արտաքուստ պարզ երևի բայց եթէ ընդունվի բոլորովին կերպարանափոխ կընէ մեր այսօր առկախ ունեցած խնդրոյ վիճակը:—Ինչպէս գիտէք այսօր այն վիճակին մէջն ենք որ կամ պէտք է Ներսէս սրբազան յաթոռ վերադառնայ կամ տեղապահ մը ընտրուի մինչև նոր պատրիարքի ընտրութիւնը: Բայց այժմ Ներսէս սրբազանի պատրիարք մնալը խիստ դժուար է, ուրեմն հարկ է ընտրել տեղապահ մը և տեղապահի մը ընտրութիւնը կը նշանակէ որ այլ ևս Ներսէս պատրիարք չըլլար: Բայց քանի որ հայոց ամեն ամենաստուար մեծամասնութիւնը պատրիարք կուզէ զՆերսէս սրբազանը, ուրեմն պէտք էր միջոց մը գտնել: Պ. Յ. Արշակ և ընկ. իրենց առաջարկովը այս միջոցը գտած կը համարեն:—Տեղապահի մը ընտրութիւնը անհրաժեշտ չընելու համար նախ հարկաւոր է որ ազգը անիշխանութեան մէջ չը մնայ: Այս բանիս համար կուզեն ընտրել նոր վարչութիւն մը, ընտրուած ուղղակի Ազգ. ժողովէն: Կրօնական խորհրդականը և պատր. փոխանորդը կը վարեն տեղապահի պաշտօն, առանց պաշտօնական արարողութեանց դիմելու: Ասով չենք մնար անիշխանութեան մէջ: Միւս կողմէ կունենանք առջևնիս տարի մը զոր կրնանք գործածել լուծելու համար պատրիարքական խնդիրը ազգին ուղած կերպովը: Բայց այս բանս ալ կախում ունի գլխաւորապէս վարչութեան անդամներէն: Հարկ է որ այդ պարոնները ըլլան կատարելապէս վստահելի անձինք, իբր բարեկամք պատրիարքի:—Պ. Յ. Արշակ և ընկ. ներկայացուցած ցուցակը այս մասին կատարեալ երաշխաւորութիւն կուտայ: Այդ ցուցակին մէջ տեսնուած անուններէն չատը այն անձինքն են որ ազգ մը կառավարելու հիմնապէս անկարող են: Նոյն իսկ պ. Արշակ, որ զանոնք կը ներկայացնէ, դեռ մի քանի օր առաջ անոնց վրայ չատ փափուկ լեզուաւ չէր խօսեր: Բայց որովհետև անոնք պիտի կոչուին պաշտօնի գլխաւորապէս իբր աշխատողք պատրիարքի վերադարձին, ուստի իրենց այս պաշտօնին համար ըսելիք մը չը կայ: Պ. Յ. Արշակի ցանկին մէջն է Սիմոն եպիսկոպոս որ մօտ երկու տարի է կրօնական խորհրդականի պաշտօն կը վարէ: Ասոր համար չը խօսուիր թէ պատրիարքի դէմ մեքենայութիւններ ըրած ըլլայ:—Կը տեսնենք պ. Ռուբէն Եաղըճեանի անունը, պատրիարքի քեռայրը և անձնուէրը: Կայ նաև անունը պ. Մինաս Չերազի որ կրնայ նկատուիլ գլխաւոր հեղինակ այս կարգադրութեանց: Աւելորդ է ըսել որ եթէ պ. Չերազ անդամակցի Ազգ. վարչութեան կատարեալ երաշխաւորութիւն մ՚է պատրիարքի բարեկամաց:

Պ. Յ. Արշակի առաջարկը սեղանին վրայ է և վիճաբանութիւնք բացուած են: Բայց դարձեալ ճապաղում, դարձեալ ճապաղում: Եուսուֆեան վարչութեան հրաժարականը ընդունելու է թէ ոչ: Շնորհակալութեան քուէ տալու է, պարապանաց, թէ ոչինչ:—Կը ներէք անշուշտ որ ասոնց վրայ չատ խօսենք: Երկար կըլլայ: Արդէն Եուսուֆեան էֆէնդի բացակայ է և կը խօսի Մամիկոնեան էֆէնտի որ ժողովին ալ սիրելի անձ է: Իր խօսքերէն կը տեսնուի թէ ինչ վտանգներ անցուցեր ենք, բայց խոհեմութիւն չէ հրապարակաւ գրել ատոնց վրայ: Մամիկոնեան էֆէնդի չատ կծու կը քննադատէ Պօլսոյ մամուլը: Ինչ և է Եուսուֆեան էֆէնդիի վարչութեան հրաժարականը ընդունուեցաւ 27 քուէով ընդդէմ 16-ի:—Վարչութիւնը ոչինչ համար տուաւ և պիտի տայ թէպէտ իր օրը պատահեցաւ կիլիկեան հերձուածն:

Այս հրաժարականը ընդունուելէն վերջ կարգը եկաւ նոր վարչութեան կազմակերպութեան եղանակին վրայ: Շատ պարզ էր որ ժողովը ընտրէր նոր վարչութիւն մը նախորդ պաշտօնի բաժանմանց եղանակաւ, և որովհետև այս չատ պարզ էր ուստի պէտք էր վիճաբանել զայս ընդունելու համար: Նոր նոր դրութիւններ սկսան առաջարկուիլ: Երբ ալ ամենքը կշտացան վիճաբանելէ, այն ատեն ընդունեցան պ. Յ. Արշակ և ընկ. առաջարկը և ձեռնարկեցին քուէարկութեան: Այս քուէարկութիւնն էր քար գայթակղութեան: Պ. Արշակի առաջարկը բաւական կը կորսնցներ իր զօրութիւնէն եթէ չընտրէին իր ցոյց տուած անձերը: Բայց ժողովականք այսպէս չեն մտածեր և կուզեն ազատ ընտրութիւններ կատարել: Արդէն քուէարկողներն երեսուն և եօթն մնացեր են: Անձայն խուլ կռիւ մը կայ որոյ հետևութիւնը կըլլայ ընտրութիւնները ամբողջ չը կատարել:

Սիմոն եպիսկոպոս կընտրուի 23 քուէով: Ալիքսան Սագամեան 17 քուէով: Նա Արշակի ցանկէն դուրս է: Միւս ընտրութիւնները կը մնան ուրիշ նստի: Պ. Յ. Արշակ ստորագրած էր իր առաջարկը «խումբ մը երեսփոխանաց կողմէ» ուրեմն յիմարութիւն չէինք ըներ ենթադրելով թէ զէթ այդ խումբը իր քուէն պիտի տար այն անձանց զոր կը ներկայացներ: Ո՛չ: Պ. Արշակի խումբի կողմէն ընտրելի ներկայացուողներէն մէկ քուէ անգամ առնող կար:—Ընդհանուր քուէարկութեան և էնթրիկներու վատ հետևութիւնը սա եղաւ որ խել մը չնորհքով անձեր, որք չատ կարող են ազգին գործերը տնօրինել, խիստ քիչ քուէ առին: Ասոնք համեմատական մնացին: Հաւանական է որ պաշտօն յանձն չառնուն, եթէ ընտրուին իսկ: Վասն զի արդէն չատ փափագող չեն, և երբ կռուով ընտրուին ալ այնուհետև ամենևին չեն ուզեր յանձն առնուլ այդ պաշտօնները, վասն զի ատեն պիտի անցնեն մաքառելու էնթրիկներու դէմ: Ասանկ բանի ալ ժամանակ չունին:

Ժողովը փակուեցաւ մի յիմար և նենգաւոր որոշմամբ: Մնացորդ չորս անդամներու համար քուէարկութիւնները պիտի կատարուին միայն այն անձանց վրայ որք այն օրը ամենէն չատ քուէ առած են: Ասոնցմէ ութը հոգի, աւելի քուէ առնողները, կը ներկայացնեն և քուէարկողք պէտք է ընտրեն անոնցմէ չորսը: Ինչպէս ստիպել 100 երեսփոխաններ որ իրենց քուէն տան այն անձանց որք միայն տասը կամ տասն և վեց անձանց քուէները վաստկած են: Համեմատական քուէարկութիւն այն ատեն պէտք էր ընել երբ մի քանի քուէարկութիւնք արդիւնք չունենային: Չենք գիտեր թէ հարիւր երեսփոխանք պիտի մարսեն այս անիրաւութիւնը, պիտի հնազանդին այս նենգութեան:—Ամեն բան կարելի է կրսեն:

Հայկակ

որոց վատ տպաւորութիւնը դարեր անգամ չեն կարողացած ջնջել հայոց մտքերէն, երբ թիւրքաց քրիստոնէից նկատմամբ տածած վատ տրամադրութիւնները յայտնի են, երբ Պայազետի դիւցազն է որ պատուոր պիտի կանգնի պարսկական արշաւանաց դէմ և երևակայել հայոցս ունենալիք վիճակը այս ընդհարման ժամանակը՝ սարսափելի է: Թիւրքաց կրակին և քիւրդի սուրին առջև, պարսկական անգթութեանց և թիւրք կառավարութեան նենգութեանց առջև պիտի ոչնչանամք մեք և թող մեր Կ. Պոլսեցի գործիչները առատ նիւթ ունենան ողբեր յօրինելու և թող թիւրք նախարարները՝ առանց ուղղակի պատասխանատուութեան ներքև իյնալու՝ գեղեցիկ առիթ ունենան վերջնական կերպիւ լուծելու Հայկական խնդիրը:

Մինթէ թիւրքաց հայոց մէջը չը կան բաւական ոյժեր՝ կը հարցունէք, որք կարող լինեն ազգային գոյութիւնը պահպանել մինչև անցնի վտանգը: Ինչ ոյժ կարելի է սպասել բարոյապէս մեռած, ոտրկացած ժողովուրդէ մը. այստեղ առ առաւելն զգացում մը կայ միայն՝ արդիւնք 2—3 տարիներու և այն չատ փոքրաթիւ զարգացած դասուն մէջը: Այն հայերը՝ որք Կ. Պոլսոյ մէջը լսած քարոզներէն յորդորեալ ի վերադարձին մի մի հրաղէն բերած էին հետերնին, գրեթէ ամբողջապէս ծախած են. այս մասին մեծապէս նպաստեցին քանի մը ցածոգի պարոններ՝ որք անամօթաբար ընկերութիւններ կազմած են «ազգային զգացում տարածելու» համար. բայց երկու զրուշի անարդ չարժելու մը համար ազգերնին անգամ ծախելու պատրաստ են: Այդ պարոններէն ոմանք քանի մ'ամիս առաջ իրենց արժանաւոր պատիժը կրեցին արդէն քանի մը հայրենասէր երիտասարդներէ՝ որպէս ժամանակին իմաց տուաւ ձեզ ձեր թղթակից և իմ յարգելի բարեկամ պ. Հրանտ:

Որչափ ազգային ոյժեր զէրօ են այս տեղ, որչափ մեր զրութիւնը սպառնալից և մեր ապագան անստոյգ է, նոյնչափ բերկրառիթ է տեսնել մերթ այնպիսի օրինակներ՝ որք ցոյց կը տան թէ տակաւին կայծեր կան թաղուած մոխրի տակ՝ զորս կարելի է արծարծել և թէ երկչոտ նպաստակներու մէջը կարելի է տեսնել մերթ առիւծի կորիւններ: Այսպիսի օրինակ մը կարող եմ տալ ձեզ իբր երկու շաբաթ առաջ պատահած: Հռչակաւոր խան Մահմուդի ցեղերէն Հայիֆ-խան պէյի Նուրի անուն որդւոյն և տեղւոյս նշանաւոր զերդասաններէն միոյն անդամ պ. Խաչատուր Նաթանեանի միջև տոհմական արժանապատուութեան վրայ վէճ մը ծագեցաւ Մանդան անուն գիւղի մէջ. կիրքերը արդէն վերին աստիճանի զրգռեալ էին երբ Նուրին ստիպուեցաւ խոնարհիլ իր ախոյեանի առջև և սպառնալեաց դառնալ իր տուն՝ ի Տաղվերան: Գիշեր էր արդէն երբ Նուրին 17 հեծեալ քիւրդերով պաշարեց այն տունը ուր պ. Նաթանեան կը քնանար և տանուտէրէն պահանջեց որ իրեն յանձնէ իր հիւրը: Պ. Նաթանեան իմանալով վտանգը վեր կացաւ և իր միակ ընկեր պ. Գարեգին Բաղէշցեանի հետ կը պատրաստուէր վտանգին դիմագրաւել, երբ տանուտէրը՝ այնպիսի վատութեամբ՝ զոր կարելի է տեսնել միայն հայոց մէջը՝ հրաւիրեց զպ. Նաթանեան որ կամ իր տունէն մեկնելու միջոց մը գտնի և կամ քիւրդերուն յանձնել զիրենք: Պ. Նաթանեան ճարտար միջոցներով յաջողեցաւ դուրս ելնել տունէն իր ընկերոջ հետ և գիւղէն միայն հինգ վայրկեան հեռու բլրի մը վրայ ժայռի մ'հետև պատսպարուելով երկու անգամ հրաղէն պարպեց հրաւիրելով քիւրդերը որ ասպարէզ գան եթէ բաւական արիութիւն ունեն. քիւրդերէն ոչ ոք չը համարձակեցաւ մօտենալ նոցա ողբ բաւական ժամանակ ի զուր քիւրդերուն ըսպասելէ վերջը ճամբայ ելան և անվնաս հասան իրենց գնալու գիւղը՝ ի Պոզասքիսէն՝ ընդունելով իրենց բազմաթիւ բարեկամաց խնդակցական շնորհաւորութիւնները: Աւելի զարմանալին այս է որ պ. Նաթանեանի ընկեր պ. Գ. Բաղէշցեանն ուսանող մ'է տակաւին «կենտրոնական» վարժարանի դրասեղաններու շուրջը:

Այսպիսի բացառիկ օրինակները ազգային ոյժ մը չեն կարող կազմել: Ինչ որ տխուր ճշմարտութիւն է այս է որ մեր զրութիւնը կարի սպառնալից, մեր ապագան կարի վտանգալից է այժմ: Մաղթենք որ մեր Կ. Պոլսեցի արիւնակիցք բանաստեղծութիւններէ տարբեր միջոցներով իրենց հայաստանցի եղբայրները ծանր ճգնաժամէ մը փրկելու խելամտին: Շաւարշ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինի «National Zeitung» լրագիրը, հաստատ աղբիւրներից ստացած տեղեկութիւնների հիման վրա, հաւատացնում է, որ իբր թէ Անգլիայի ամենից աւելի համարձակ հակառակորդը Կ. Պոլսում Ռուսաստանն էր: Լրագրի խօսքերով, Ռուսաստանը ցանկանում էր, նախ և առաջ այն բանին հասնել, որ Անգլիան բոլորովին հրաժարվէր իր դիտաւորութիւններից Եգիպտոսում: Դիւֆերին իր ժամանակին գիտէր Ռուսաստանի կողմից արած այդ ջանքերի մասին, որոնք ձգձգեցին անգլո-թիւրքական պատերազմական դաշնագրի ստորագրելը, բայց այնու ամենայնիւ, զիջումն չարաւ:

—«Русскій Курьеръ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետևեալը: Անգլիայի և Բ. Դրան մէջ մի նոր անհամաձայնութիւն ևս ծագեց: Անգլիան կամենում էր դնել Ռուսաստանում եղներ, ձիաներ և ամեն տեսակ անհրաժեշտ պաշարներ անգլիական զօրքի համար Եգիպտոսում: Այդ նպատակով անգլիական դեսպանութիւնը եօթն շոգենաւեր պատրաստեց ապրանքները Օդեսայից Եգիպտոս հասցնելու համար: Բայց յանկարծ այդ բանը իմանում է Հաֆիզ-Բայրամ-աղան, և պալատը յուզման մէջ ընկաւ: Ինչպէս կարելի է թոյլ տալ անգլիացիներին պատերազմական պաշարներ անցկացնել Բոսֆորի միջով: Անյապաղ խորհուրդ է կազմվում, և Արթին-բէյ ուղարկվում է անգլիական դեսպանատուն այդ առիթով լորդ Դիւֆերինից բացատրութիւն խնդրելու համար: Կ. Պոլսի բազմաթիւ վաճառականները մեծ քանակութեամբ ձուաներ, գինի և այլ պաշարեղէններ պատրաստեցին Եգիպտոս ուղարկելու և անգլիացիների վրա ծախելու համար, բայց մաքսային վարչութիւնը թոյլատրութիւն չը տուեց արտասահման տանել ապրանքը, պատճառ բերելով, թէ այդ արտահանութիւնը այնպէս կը ներգործի, որ երկրի ներսը կը բարձրանան նոյն ապրանքների գները: Բացի դրանից, պոլիցիան, այս օրերս, կալանաւորեց վեց հայերին, մեղադրելով նրանց այն բանում, որ իբր թէ նրանք վարձում էին հայերին անգլիացիների համար: Իսկապէս բանը նրանումն էր, որ անգլիացիները խնդրում էին վարձել 3,000 հայերին երկաթուղիների վրա և այլ ծառայութիւնների համար Եգիպտոսի անգլիական զօրքի համար: Թիւրքաց կառավարութիւնը ոչ մի պայմանով չէ կամենում թոյլ տալ հայերին մտնել անգլիական ծառայութեան մէջ և այդ պատճառով կալանաւորեց մի քանի հայերի: Հայոց պարիարքը գանգատվեց այդ բանի դէմ անգլիական դեսպանութեանը:

—«France» լրագրին Բերլինից հեռագրում են սեպտեմբերի 15-ից հետևեալը: Այստեղի զինուորական շրջաններում չեն հաւատում, որ պատերազմը Եգիպտոսում վերջացած լինի: Գերմանական մամուլը, առհասարակ, այն միտքն է յայտնում, որ Եւրոպան չէ կարող թոյլ տալ միայն Անգլիային վերջացնել եգիպտական խնդիրը, ոչ էլ կառավարել Եգիպտոսը, խաղաղութիւն հաստատելու պատրուակով: Այստեղ կը ցանկանային առաջարկութիւններ անել Ֆրանսիային, բայց գիտեն, որ այդ պետութիւնը հատատ վճռել է միջամտութիւն չը գործել: Այնուամենայնիւ. միաձայն կոնդրէս են պահանջում:

—Լրագիրներին Բերլինից հեռագրում են, որ մեծ ազգատութիւն է տիրում Բերլինում: Երէկ մի սովեալ մարդ անցնում էր փողոցով գլխարկի վրա հետևեալ մակագրված տախտակ ունենալով, «Հաց եմ խնդրում:»

—Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալը: Իշխան Բիսմարկ այն աստիճան օտարոտի մարդ է, որ նրան ամեն տեսակ կոմբինացիային ընդունակ կարելի է համարել, և որ նրա մասին տարածված ոչ մի լուրին առանց ուշադրութեան չէ կարելի վերաբերվել: Վատիկանում կարծում են, որ գերմանական կանցլերը դիտաւորութիւն ունի վերականգնել լեհական թագաւորութիւն և թագաւոր նշանակել աւստրիական մի իշխանին: Ինքն իրան հասկանալի է, որ ազգայնութեան թէորիան այստեղ նշանակութիւն չունի: Գերմանացիների համար այդ թէորիան ճիշդ է միայն Գերմանիայի համար, իսկ ուրիշ երկրների համար նոյն թէորիան սխալ է: Վերականգնված Լեհաստան տեսնելու ցանկութեան պատճառը կայանում է այն նոր մտքի մէջ, որ լեհական թագաւորութիւնը մի պատնէշ կը լիներ Աւստրիայի և Գերմանիայի համար: Այդ լուրը տարածողները ոչ մի խօսք չեն ասում այն բանի մասին, թէ արդեօք կը զիջանէ Պրուսիան Պոզնանի դքսութիւնը վերականգնված Լեհաստանին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ուսումնարանական զբօսանքները Շվեյցարիայում: Աչքի առաջ ունենալով մեր հասարակութեան այն մեծ հետաքրքրութիւնը, որ նա ունի դէպի կրթողական զբօսանքները և ճանապարհորդութիւնները, ասում է «Русскій Курьеръ» լրագիրը, մենք ստում ենք Շվեյցարիայից մեզ ուղարկված մի քանի նկատողութիւն, ներ գիմնազիաների և ուսումնարանների աշակերտների ճանապարհորդութիւնների օրինակելի կազմակերպութեան մասին Բէրնի կանտոնում: Փորձը ապացուցեց, որ աշակերտների զբօսանքները իրանց դաստիարակների հետ, դիսցիպլինային ընտելացնելով աշակերտներին, մի և նոյն ժամանակ մօտեցնում են նրանց միմեանց հետ և աշակերտների ու վարժապետների մէջ պարզ ու հասարակ յարաբերութիւններ են հաստատվում, և բացի դրանից, լաւ դաստիարակի առաջնորդութեան տակ այդպիսի զբօսանքները չարժում են աշակերտների բարի նախանձը: Բէրնի կանտոնի մանկավարժական խորհուրդը մտածեց այդպիսի զբօսանքներ կազմակերպել և աշխատեց սուբսիդիա ստանալ կառավարութիւնից, որը և համաձայնվեցաւ: Նոր յատակագծով, զբօսանքները կատարվում են ուսման տարվայ ընթացքում տօների ժամանակ: Գիմնազիաների բնական գիտութիւնների ուսուցիչները պարտաւորվում են ժամանակ առ ժամանակ աշակերտների հետ միասին այցելել քաղաքից ոչ հեռու գտնվող գործարանները, գործատունները, օրանժերէյները և այլ տեղերը: Այդպիսի զբօսանքներ անելու համար ուսումնական տարվայ ժամանակ գնում է ամբողջ դասատունը: Ժողովրդական ուսումնարաններում ևս ուսումնական տարվայ ընթացքում կատարվում են այդպիսի ճանապարհորդութիւններ, և այդ ժամանակ ուսուցիչը բացատրում է մանուկներին տարրական բուսաբանութիւնը, կենդանաբանութիւնը և բնութեան զանազան երևոյթները: Ցօները հասնելուն պէս, միջնակարգ ուսումնարաններում սկսվում են ճանապարհորդութիւնները, և այդ ճանապարհորդութիւններից իւրաքանչիւրը շարունակվում է 6-ից մինչև 12 օր: Այդ ճանապարհորդութիւններին, որոնց ամբողջ տեղութեան ժամանակ աշակերտները կառավարութեան հաշուով են ապրում, կարող են մասնակցել իւրաքանչիւր դասատու միայն ամենալաւ աշակերտները: Բէրնի գիմնազիան տօներին միայն այդպիսի ճանապարհորդութիւններ է անում և իւրաքանչիւր այդպիսի զբօսանքին մասնակցում են երկու ամենամեծ դասատների ամենալաւ աշակերտները և երկու դաստիարակներ: Ժողովրդական ուսումնարաններում տօնական զբօսանքները, որ ծառայում են որպէս պարգևներ ամենալաւ աշակերտների համար, շարունակվում են 1-ից մինչև 2 օր: Թէ միջնակարգ ուսումնարաններում և թէ ժողովրդական ուսումնարաններում զբօսանքները կրթողական բնաւորութիւն ունեն: Ճանապարհին ժողովում են բոյսեր, հանքեր, այցելում են գործարաններ և այլն: Կառավարութիւնը թէպէտ մեծ ծախսեր է անում այդ զբօսանքների վրա, բայց նրա միջոցները չէին բաւականանայ այդ բանի համար, եթէ ինքն հասարակութիւնը, այսինքն ծնողները և պատանի աշակերտների ազգականները մեծ համակրութեամբ չը վերաբերվէին այդ զբօսանքներին: Երկաթուղիները, հիւրանոցների տերերը և այլն, նշանաւոր զիջումներ են անում նորաբոյս սերունդին:

***

Մուրացկանութեան պրոֆէսօր: Այս օրերս Լօնդոնի լրագիրներում հետևեալ յայտարարութիւնը տպվեցաւ: «Մուրացկանութեան արուեստը ուսուցանվում է 6 դասում: Պրոֆէսօր Լազար Բունէյ պատիւ ունի յայտնել պատուելի հասարակութեանը, որ ինքն հիմնել է ուսումնարան մուրացկանութեան արուեստը տեսականապէս և գործնականապէս ուսուցանելու համար: Ամեն միջակ ընդունակութիւնների տէր մարդ, անցնելով դասընթացքը 6 դասում, կարող է յարմար և անհոգ կերպով ապրել հասարակութեան հաշուով: Պրոֆէսօրի պայմանները խիստ մատչելի են: Փոքրիկ վճարով նա ընդունում է մանուկներին: Իրան յանձնված մանուկները կը սովորեն ամեն տեսակ զրութիւն ընդունելու արուեստը առանց ճնշելու իրանց առողջութեանը: Զափաւոր գներով պրոֆէսօրը ցոյց է տալի քաղաքի դէպի մարդասիրութիւնը աւելի հակված մասերում գտնված փողոցները: Պրոֆէսօր Բունէյ բազմաթիւ վկայականներ ունի զանազան հիմնարկութիւններից: Ճարպիկ մարդիկ էժան գնով կարող են ստանալ նրանից երկուորեակների, որոնք հիանալի կերպով սովորած են ողորմութիւն խնդրել փողոցի վրա և որոնք սաստիկ նման են միմեանց: Վերջապէս, պրոֆէսօրը կարող է շներ գտնել կոյրերի համար, գաւազաններ, մի խօսքով, ամեն բան, ինչ որ հարկաւոր է աղքատութեան համար: Գաւառացիների պատէրները կատարվում են արագ և ճիշդ:»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 սեպտեմբերի: Սեպտեմբերի 13-ին առաւօտը Ս. Պետերբուրգ վերադարձան մինիստր Բունգէ և ներքին գործերի մինիստրի օգնական Օրժեվսկի: 150 աւելի ցանկացողներ կային մնալ ծովային ուսումնարանը, բայց քննութիւն տուին 36 հոգի: Սեպտեմբերի 15-ից ֆինանսների մինիստրութեան մէջ նիստեր կը սկսվեն տեղական պալատների վարչութեան հարցը քննելու և ակցիզային վարչութիւնները պետական պալատներին ենթարկելու համար:

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ, 14 սեպտեմբերի: Սեպտեմբերի 11-ին փակվեցաւ ծովեզրաբնակների ժողովը: Ժողովը ցանկութիւն յայտնեց Վօլգա-Դվինեան երկաթուղի կառուցանել, արգելել գինետունները Մուրմանի մէջ, ապահովել նաւերը, բանկ հիմնել արտելներ կազմելու համար, արդիւնաբերութեան վրա հսկողութիւն նշանակել և արգելել կետ ձկների սպանումը մինչև յուլիսի 7:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 սեպտեմբերի: Սեպտեմբերի 13-ին զինուորական դատարանի մէջ սկսվեցաւ դատաստանական գործի քննութիւնը անցեալ տարի քաղաքական պատճառով Գրէյմին սպանելու մասին: Մեղադրվածները երեք են, վկաները 21:

ՑԵՏԻՆԻԷ, 14 սեպտեմբերի: Հերցեգովինացի փախստականներից Նիկշիչի մէջ գործած անկարգութիւնները զսպելու համար այնտեղ չերնոգորիական զօրքեր են ուղարկված:

ԼՕՆԴՕՆ, 14 սեպտեմբերի: Այսօր խեդիվը հասաւ Կայիրէ: Ալէքսանդրիայից դուրս գնալու ժամանակ ժողովուրդը նրան ուղեկցում էր համակրական աղաղակներով: Ուէլսլէյին և Սէյմուրին շնորհված են բարձրագոյն աստիճաններ Եգիպտոսի մէջ գործած յաղթութիւնների համար:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 14 սեպտեմբերի: Այսօր վերադարձան գերմանական ջրերից Դանիայի թագաւորը և թագուհին:

ՍՏՕԿՀՈԼՄ, 14 սեպտեմբերի: Նորվեգիայի մէջ հանրապետական ցոյցեր են կատարվում Շվեցիայի հետ ընհանուր դրօշակ ընդունելու դէմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 սեպտեմբերի: „Правит. Вѣстн.“ լրագիրը սեպտեմբերի 14-ից հաղորդում է. Բարձրագոյն շնորհակալութիւն է յայտնված կարգապահութեան և մաքրութեան մասին Մոսկվայի մէջ իշխան Դոլգորուկովին, արքայական բարեհաճութիւն օբեր-պոլիցմէյստերին և կառավարական անձանց, բացի այդ ստորին պոլիցիականներին և ժանդարմներին շնորհված

է մի մի րուբլ խուրաքանչիւր մարդու: „Новости“ լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրութեան մէջ քննվում է հարց բոլոր լրացուցիչ տուրքերը հաւասարեցնելու մասին կայսրութեան և Լեհաստանի մէջ, որոնք նշանակված են առևտրական դոկումենտների համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 սեպտեմբերի: „Новое Время“ լրագիրը հաղորդում է. ենթադրված է 1883 թ. Ս. պետերբուրգի մէջ քաղաքական մի մեծ լրագիր հրատարակել Բատեզատի խմբագրութեամբ, որ թագաժառանգ Նիկոլայի լիցէի ուսանող է եղել: Ֆինանսների մինիստրութեան մէջ նոր կանոններ են որոշվում ակցիոներական բանկեր հիմնելու համար: Այդ կանոնները կարելութեան չափ ապահովում են սպեկուլացիայի և բանկային անանկութիւնների դէմ: Արտօնութիւնների հարցը քննող մասնաժողովը նախագծում է անվարձ բաժանել արտօնութիւնները, յօգուտ գանձարանի յայտնի % վերապահելով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 սեպտեմբերի: Օրէնքների ժողովածուի մէջ տպված է Բարձրագոյն վաւերացումն մամուլի վերաբերութեամբ նոր կանոնների, որոնց մասին լրագիրները հաղորդել են:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ հը թրջվող վերարկուներ 6—18 ր., կրագեր 3 ր., գրաֆիններ և պատուկներ 25 կ., բաժակներ 7 կ., գրիչներ 144 հատ 20 կ. և այլն: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: Նոյն տեղը առհագին քանակութեամբ վակսա, թանաք, փոշիներ մետալներ սրբելու համար, մեծ քանակութեամբ թէյ առաջին հունձի 1 ր. 10 կ.—մինչև 2 ր. ամենալաւը ֆունտը առանց թղթի: Հրացաններ, րէվոլվերներ, երեսսրբիչներ, ալբոմներ, փոստի թուղթ և այլն:

6—10

ՐԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ բարձր դասատան աշակերտ ցանկանում է աներում ԴԱՍԵՐ տալ: Նմանապէս յանձն է առնում միևնոյն ուսումնարանի 1, 2, 3-որդ դասատուների համար աշակերտներ պատրաստել: Հասցէն կարող են իմանալ Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, Վարշավսկայա պեկարնիայում, պ. Մարտիրոս Հախնազարեանից:

1—5

Приготовляю УЧЕНИКОВЪ въ нисшія и среднія учебныя заведенія. Подробныя УСЛОВІЯ узнать въ домѣ Теръ-Давидова, на Полицейской улицѣ, № 22.

Хосроевъ

В Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ԹԷՅ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր.—1 ր. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, չօկօլադ ֆրայ, Ճեվիլգի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ Վէբլի, ԹԱՄԲԵՐ Բալնեբիի, կօլմանի նըշըշտայ, ԱԼԲՕՄՆԵՐ Ճվարցի կէս գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՅՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:

42—100

Թողնելով ԹԻՖԼԻՍԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ տէրը ծախում է իր ՀՈՂԵՐԸ Նաբերեժնայ և Միխայլովսկայա փողոցների վրա, գրաֆիններ 25 կ., ալբոմներ կիսագնով և այլն:

14—15

ԱՂ. ՄԻՐԶՈՅԵԱՆԻ պատրաստական և ԳԻՇԵՐՕԹԻԿ դպրոցում տեղափոխվեցաւ սուրբ Նշանի փողոցը ԱԲԻՍԱԼՈՄԵԱՆԻ տունը:

3—5

ԻՆԺԵՆԵՐ-ՏԵԽՆԻԿ յանձն է առնում կազմել քաղաքի բնակարանների և ամարանոցների ՅԱՏԱԿԱԳԾԵՐ (планы) և ՏԵՍՔԵՐ (фасады) նոյնպէս վերահսկողութիւն շինութիւնների ժամանակ: Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատանը:

ИНЖЕНЕРЪ-ТЕХНИКЪ берется составлять ПЛАНЫ и ФАСАДЫ городскихъ и дачныхъ домовъ и руководить РАБОТАМИ. Адресъ можно узнать въ редакціи „Мшакъ“

3—10

РАФФИ
ԽԱՄՍԱՅԻ
ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից

Թիֆլիսում վաճառվում է

„Մշակի“ խմբագրատանը.—„Կենտրոնական գրավաճառանոցում“ Միրիմանովի տանը № № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան գրավաճառանոցում“.—Պ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում.—Պ. Շահինեանցի ծխախոտի խանութում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով:

ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“.
РАФФИ.

Յանձնուեցաւ մամուլին մեր
„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ„ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ ԴԱՍԱԳԻՐՔԸ
եւ լոյս կը տեսնի մինչև ամսիս վերջը:

Յ. Նազարեանց

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
սիստեմատիքական ընթացք
Գրիգորի Վարձելեան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար մասն առաջին (ամբողջ թուեր)

Մամուլի տակն է և սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ):

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջումն 20%:

Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում:

Օտար տեղերից դիմում են այս հասցէով Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

ԴՕԿՏՕՐ Ա. ԲԱԲԱՅԵԱՆԸ

Միայն ամսոյս 15-ից կարող է հիւանդներ ընդունել, առաւօտները ժամը 9—11, իւր նախկին բնակարանում. Սօլօլակ, Սերգիեվսկի փողոց, Բայինդուրովի տունը:

3—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ
ԴԱՍԱԳԻՐՔԸ

Կովկասեան գրախանութի հրատարակութեամբ և ծախվում է նոյն գրախանութում:

Գինը 25 կոպէկ է: Գումարով առնող և ԿԱՆԽԻԿ վճարողին 20% զիջումն կը լինի:

—Կարելի է դիմել

Тифлисъ. — Кавказская книжная торговля.—З. П. Грикурову

կամ

Тифлисъ.—На Авлабарѣ.—Ованнесу Назарьянцъ.

Յ. Նազարեանց.

3—4

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 րուբլ է, կէս տարվանը 4 րուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևեալ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Միքայել Տեր-Նիկողոսեան

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սունդուկներ ճանապարհի 6—35 ր., մառաններ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխօնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) րէվօլվէրի, սիգար Ռէնդարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) Էյնէմի. կօֆէ Էյնէմի և Միխէլսօնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դոյթուկ (пухъ), պադնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ութոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիէներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չումիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլոսապոշկաններ Վարշավու; ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլպաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, սնձրևի և շքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաններ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆէչստկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մինր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կօրը, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՕՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտ ակէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

135—180

Միքայել Տեր-Նիկողոսեան

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. каз.